ԱԳՐՈ Լրատու

ՀՈՒՆԻՍ 5 - 18 2015 Թ. ԹԻՎ 14 (2069)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ծրագրերը նպաստում են ագրարային ոլորտի զարգացմանը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) պատվիրակությանը, որի կազմում էին ԱՄՆ ՄԶԳ փոխտնօրենի տեղակալ Ջոնաթան Կացը և Գործակալության հայաստանյան առաքելության ղեկավար Քարեն Հիլիարդը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ԱՄՆ ՄԶԳ կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերի ընթացքը և ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համագործակցության հետագա հեռանկարները: Ընդգծելով հատկապես՝ «Մաքուր էներգիա և ջուր», «Աջակցություն Հայաստանում գյուղատնտեսական համատարած հաշվառմանը», ինչպես նաև «Աջակցություն Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնին և Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնին» ծրագրերի բարեհաջող ընթացքն ու արդյունավետությունը՝ նախարարը համոզմունք է հայտնել, որ այդ ծրագրերը մեծապես նպաստում են Հայաստանի ագրարային ոլորտի զարգացմանն ու համայնքների բարեկեցության բարձրացմանը:

Այնուհետև Ս. Կարապետյանը համառոտ ներկայացրել է Հայաստանում գյուղատնտեսության բնագավառի ներկա վիճակը, մատնանշել առաջնահերթությունները: Անդրադառնալով ոլորտի առկա խնդիրներին՝ նախարարը, մասնավորապես, շեշտել է գյուղատնտեսական կենդանիների հաշվառման և համարակալման, ձկնաբուծարաններում արդիական ռեսուրսախնայող և արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման կարևորությունը: Այս համատեքստում նախարարը հատկապես կարևորել է մի շարք ձկնաբուծարաններում ջրի խնայողատար ռեժիմով նորագույն համակարգերի ներդրման ուղղությամբ իրականացվող պիլոտային ծրագրերի իրականացման կարևորությունը:

2

Գինեգործության ավանդույթները շարունակվում են

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է ֆրանսիական գինեգործական ընկերությունների ներկայացուցիչների պատվիրակությանը, որը Հայաստան է ժամանել հայ գինեգործական ավանդույթներին և ոլորտի ընկերությունների գործունեությանը ծանոթանալու նպատակով:

Ողջունելով հյուրերին՝ նախարարը նշել է, որ Հայաստանն ու Ֆրանսիան գյուղատնտեսության ոլորտում ունեն փոխգործակցության մեծ ներուժ, մասնավորապես՝ գինեգործության, խաղողագործության և պանրագործության ոլորտներում: «Հատկապես այս ճյուղերում Ֆրանսիան ունի դարերով կուտակած հարուստ փորձ, որի կիրառման դեպքում, նաև ֆրանսիացի մասնագետների հետ սերտ համագործակցության շնորհիվ, մեր երկրում գինեգործությունն ու պանրագործությունը զարգացման նոր փուլ կմտնեն», - նշել է Սերգո Կարապետյանը:

Նախարարի խոսքով՝ այդ ոլորտների զարգացումն առավել արդիական է դարձել հատկապես Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցելուց հետո: Այս համատեքստում նախարարը ընդգծել է Հայաստանում համատեղ ձեռնարկությունների ստեղծման հնարավորությունը՝ ստացված արտադրանքը հետագայում ԵՏՄ շուկա արտահանելու նպատակով: Միաժամանակ նախարարը վստահություն է հայտնել, որ շնորհիվ Հայաստանի բարենպաստ բնակլիմայական պայմանների և ֆրանսիական կողմի ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ, այդ արտադրանքը ԵՏՄ շուկայում մեծ պահանջարկ կունենա:

Նախարարը նաև պատրաստակամություն է հայտնել հնարավորինս աջակցել ֆրանսիական ընկերություններին՝ տեղական ձեռնարկությունների հետ գործարար կապերի հաստատման խնդրում:

Պատվիրակության անդամներն, իրենց հերթին, համոզմունք են հայտնել, որ ճանաչողական բնույթ կրող այս այցը կունենա շարունակական բնույթ և հիմք կհանդիսանա հետագայում տեղացի գինեգործների հետ սերտ ու արդյունավետ համագործակցության հաստատման համար:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀՀ կառավարությունում

Կառավարության նախորդ նիստում, ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, հանդես է եկել ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը:

Նա նախ անդրադարձել է այս գարնանը տեղի ունեցած կարկտահարության դեպքերին և դրանց պատճառած վնասներին՝ նշելով, որ բոլոր համայնքներում գործում են հանձնաժողովներ, որոնք արձանագրում են վնասի չափերը: Այնուհետև նախարարը, ընդհանուր առմամբ, դրական է գնահատել գյուղատնտեսական տարին: Մարտ, ապրիլ, մայիս ամիսներին տեղացած անձրևի արդյունքում, երկրի հիմնական ջրամբարներում, անցյալ տարվա համեմատ, ավելի շատ ջուր է կուտակվել, ինչի շնորհիվ առատ կլինի մրգի և բանջարեղենի բերքը: Հաջողությամբ սկսված բերքահավաքը շարունակվում է: Բավականաչափ միրգ և բանջարեղեն է արտահանվում հարևան երկրներ, հիմնականում՝ Ռուսաստանի Դաշնություն: Գյուղատնտեսության նախարարի խոսքով՝ դրական արդյունքներ են ակնկալվում ոլորտի գրեթե բոլոր ճյուղերից:

Հակակարկտային կայանների տեղադրման վերաբերյալ հաղորդումով հանդես է եկել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը: Այժմ Հայաստանում գործում է 412 հակակարկտային կայան, մինչդեռ պահանջարկն ավելի քան 5 հազար է, առաջնային անհրաժեշտությունը՝ 1021 հատ:

Վարչապետ Հովիկ Աբրահամյանը հանձնարարել է կատարել անհրաժեշտ ֆինանսական հաշվարկներ՝ ձեռք բերվելիք կայանների վերաբերյալ:

Օրակարգային է արտահանումների գործընթացի պատշաճ կազմակերպումը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը խորհրդակցություն է հրավիրել հանրապետությունում գործող արտահանող ընկերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ թարմ պտուղ-բանջարեղենի արտահանման սեզոնի հետ կապված ընթացիկ հարցերը քննարկելու նպատակով:

Ընդգծելով, որ գյուղատնտեսական տարին բերքառատ է, և այս տարի հատկապես ծիրանի և խաղողի բարձր բերք է ակնկալվում, նախարարն առանձնահատուկ կարևորել է արտահանման կազմակերպման հարցը: «Արտահանման գործընթացն ընթացքի մեջ է, մի քանի օրից կսկսվի ծիրանի արտահանումը, բոլորիս համար օրակարգային է արտահանումների գործընթացի պատշաճ, ժամանակին և հստակ կազմակերպումը»,- նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը: Ըստ նախարարի՝ Հայաստանը անդամակցելով Եվրասիական տնտեսական միությանը, բարենպաստ պայմաններ են ստեղծվել հանրապետությունում արտադրվող գյուղմթերքի արտահանման համար. ընթացակարգերն առավելագույնս պարզեցված են, ուստի անհրաժեշտ է օգտվել ստեղծված հնարավորությունից և ավելացնել պտուղ-բանջարեղենի արտահանումների ծավալները՝ հատկապես դեպի ռուսական շուկա: Արտահանող ընկերությունների ներկայացուցիչների խոսքով՝ արդեն իսկ հանրապետությունից կաղամբի և կարտոֆիլի խմբաքանակներ են արտահանվում, փաստաթղթային ձևակերպումների հետ կապված խնդիրներ չկան: Որպես հիմնական խոչընդոտ՝ նրանք առանձնացրել են Վերին Լարսի անցակետում որոշ դեպքերում գոյացող հերթերը: «Սպայկա» ընկերության ներ

2

Վարկային կազմակերպությունը գյուղացու գործընկերն է Էջ 3

Նոր ջրամբարների կառուցման անհրաժեշտություն Էջ 5

Մասնագետի խորհուրդ Էջ 7

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Օրակարգային է արտահանումների գործընթացի պատշաճ կազմակերպումը

1

որ այս տարի իրենք նոր նախաձեռնությամբ են հանդես եկել, ձեռք են բերել նոր մեքենաներ՝ ռուսական համարանիշերով, որոնց միջոցով կարող են անարգել, առանց հերթերի ապրանքն արտահանել ՌԴ: Դրանք հնարավորություն ունեն բեռնել մոտ 2-2,5 տոննա բերք, անմիջապես գյուղացիներից բերքը վերցնել, և իրենց աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպել,

մյուս արտահանողները ևս կարող են դիմել իրենց և օգտվել նույն ծառայությունից: Նախարարը ևս մեկ անգամ հորդորել է մեծ ուշադրություն դարձնել արտահանումների գործընթացին վերաբերող հարցերին, ակտիվացնել գյուղացիական տնտեսությունների հետ աշխատանքները, ինչպես նաև ընդլայնել արտահանվող պտուղ-բանջարեղենի տեսականին: Նախարարը նաև նշել է, որ նախարարությունում գործում է թեժ գիծ հեռախոսակապ և հորդորել է արտահանողներին՝ բոլոր ընթացիկ հարցերի մասին ժամանակին բարձրաձայնել, որպեսզի հնարավոր լինի դրանց արագ արձագանքել և լուծումներ տալ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ծրագրերը նպաստում են ագրարային ոլորտի զարգացմանը

1

«Գյուղատնտեսության ոլորտի մի շարք ճյուղերում առկա են հնարավորություններ ոչ միայն կրկնապատկել, այլև եռապատկել արտադրության ծավալները, ինչը կհանգեցնի նաև արտահանման ծավալների ավելացմանը», – նշել է նախարարը: Միաժամանակ Սերգո Կարապետյանը շեշտել է, որ Հայաստանը կարևորում է ԱՄՆ և Եվրամիության երկրների հետ տարբեր ոլորտներում, այդ թվում նաև՝ գյուղատնտեսության բնագավառում հարաբերությունների ընդլայնումն ու եվրոպական շուկա մրցունակ գյուղմթերքի արտահանումը: Իր հերթին պարոն Կացը հավաստիացրել է, որ գյուղատնտեսության ոլորտում իրականացվող երկկողմ ծրագրերը կկրեն շարունակական բնույթ: Նա նաև հնարավոր է համարել հետագայում ընդլայնել Գործակալության կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերի շրջանակը՝ ելնելով ոլորտի առաջնահերթություններից:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ընթացիկ հարցերի քննարկում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հանդիպել է կաթնամթերք արտադրող այն ընկերությունների ներկայացուցիչների հետ, ովքեր մասնագիտացված են նաև կաթի փոշու արտադրության գործում: Հանդիպմանը քննարկվել են ոլորտի ընթացիկ խնդիրները:

«Այսօր մեր հանրապետությունում անհրաժեշտ է խթանել տեղական կաթի փոշու արտադրությունը: Կաթի փոշի արտադրող ձեռնարկություններում առկա են կարողություններ ու հզորություններ արտադրության ծավալների ավելացման համար, ինչը կնպաստի նաև կաթի սեզոնայնության գործոնի մեղմացմանը», – նշել է նախարար Սերգո Կարապետյանը: Նախարարի համոզմամբ, դա կնպաստի կաթի և կաթնամթերքի արտադրության և արտահանման ծավալների ավելացմանը, ինչը կարևոր է՝ հաշվի առնելով Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը: Հանդիպմանը ներկա ընկերությունների ներկայացուցիչները ներկայացրեցին իրենց հուզող խնդիրները՝ համոզմունք հայտնելով, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ ուժերով, դրանց հնարավոր է տալ լուծումներ: Նախարարը նաև հորդորել է դիվերսիֆիկացնել արտադրանքի՝ մասնավորապես պանրի տեսականին, որը կարող է մեծ պահանջարկ ունենալ ԵՏՄ շուկայում:

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Բացվել է գյուղատնտեսական առաջին տոնավաճառը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, Երևանի քաղաքապետի տեղակալ Դավիթ Օհանյանի հետ համատեղ, հունիսի 13-ին մասնակցել է Կասյան փողոցին հարող հրապարակում գտնվող գյուղատնտեսական տոնավաճառի պաշտոնական բացման արարողությանը: Տոնավաճառը կազմակերպվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ և Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ, որին մասնակցել են ՀՀ տարբեր մարզերը ներկայացնող գյուղացիական տնտեսություններ՝ սպառողներին ներկայացնելով բացառապես սեփական արտադրանքը:

Նախարարը շրջել է տոնավաճառում, գնումներ կատարել, զրուցել գյուղացիների և գնորդների հետ: «Այս տարի գյուղատնտեսական տոնավաճառներն ավելի շուտ են սկսել գործել, քանի որ տարին բերքառատ է, և գյուղատնտեսական մթերքների նկատմամբ պահանջարկը մեծ է: Մի քանի շաբաթից կվերաբացվի երկրորդ տոնավաճառը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հնարավորություն կա բացելու նաև երրորդը»,- նշել է նախարարը: Ս. Կարապետյանի գնահատմամբ, նախորդ տարվա համեմատությամբ, գները մատչելի են, տարին բերքառատ է և միտում կա գների ավելի նվազման: Երևանի քաղաքապետի տեղակալ Դավիթ Օհանյանն էլ վստահեցրել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համագործակցությունը կշարունակվի, և անհրաժեշտության դեպքում, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի հանձնարարությամբ մայրաքաղաքում գյուղմթերքի տոնավաճառների համար կտրամադրվեն նոր տարածքներ:

Գյուղացիական տնտեսությունների մասնակցությունը տոնավաճառներին անվճար է, իսկ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տոնավաճառների մասնակիցներին անվճար տրամադրում է նաև հարմարավետ վրաններ, վաճառասեղաններ, կշեռքներ և սայլակներ:

Հիշեցնենք, որ տոնավաճառն անցկացվում է 2011 թվականից և գործում է յուրաքանչյուր շաբաթ և կիրակի օրերին: Մասնակցությունը տոնավաճառին թույլատրվում է միայն գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) կողմից տրված համապատասխան տեղեկանքների առկայության դեպքում, որոնք հավաստում են, որ վաճառքի ներկայացվող ապրանքը տվյալ մասնակցի սեփական արտադրանքն է:

Հրատարակվել է գյուղատնտեսական առաջին հանրագիտարանը

ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ հրատարակվել է Հայաստանի գյուղատնտեսական առաջին հանրագիտարանը, որի շնորհանդեսը տեղի է ունեցել «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում: Միջոցառման պաշտոնական արարողությանը մասնակցում էին ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիր Հովհաննես Այվազյանը, գիտնականներ, դասախոսներ, պաշտոնյաներ:

Հանրագիտարանը պարունակում է համապարփակ տեղեկություններ ՀՀ գյուղատնտեսության, գյուղատնտեսական գիտությունների, հարակից տնտեսության ճյուղերի և բնագավառներ վերաբերյալ, տեղեկությունների ոլորտում էական ներդրում ունեցած հայ գիտնականների, ինչպես նաև տարբեր ժամանակահատվածներում գյուղատնտեսության ասպարեզում աչքի ընկած, պետական պարգևների արժանացած անձանց մասին: Լուսաբանված են գյուղատնտեսության ոլորտի հարաբերությունները կարգավորող հիմնական իրավական ակտերը:

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն իր ողջույնի խոսքում մասնավորապես նշել է, որ հանրագիտարանի ստեղծմանը նախորդել է շուրջ երկու տարվա հսկայածավալ և գնահատելի աշխատանք: Նա շնորհակալություն է հայտնել հանրագիտարանի ստեղծման գործում իրենց ավանդը ներդրած անձանց և կազմակերպություններին:

«Հաշվի առնելով, որ գյուղատնտեսությունը մեր երկրում համարվում է տնտեսության գերակա ոլորտ՝ մենք առանձնակի կարևորում ենք նաև հայ գյուղացու և գյուղատնտեսության ոլորտի աշխատողների իմացության մակարդակի բարձրացումը, որին, հուսով ենք, մեծապես կնպաստի հրատարակված հանրագիտարանը»,- նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարարը:

Ս. Կարապետյանը հավելել է, որ գյուղատնտեսական հանրագիտարանը, լինելով առաջին թեմատիկ հանրագիտարանը, ամբողջացնում է նաև Հայաստանի գյուղատնտեսության անցյալի ու ներկայի պատմությունը, ուստի այն գյուղի աշխատավորից, գյուղատնտեսության տնտեսավարողներից բացի, կարող է օգտակար լինել նաև մասնագետների լայն շրջանակների և ուսանողների համար:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանն, իր հերթին, կարևորելով նման նախաձեռնությունը՝ նշել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը մեր երկրի ամենաակտիվ գործող գերատեսչությունն է, որն աչքի է ընկնում գյուղատնտեսության ոլորտին նվիրված բազմաթիվ միջոցառումների հաճախակի կազմակերպմամբ, և այսօրվա նախաձեռնությունն այդ ակտիվության դրսևորումներից մեկն է: Նա նաև հավելել է, որ գյուղատնտեսության նախարարության համագործակցությունը ԳԱԱ հետ ունի տարիների վաղեմություն. նախարարության ներկայացուցիչները մշտապես պատրաստակամություն են հայտնել կիրառել ԳԱԱ աշխատակիցների գիտական նորույթները՝ ի նպաստ ոլորտի զարգացման:

Միջոցառման ավարտին հանրագիտարանի մշակման և հրատարակման գործում արդյունավետ և արգասաբեր աշխատանքներ իրականացնելու համար, Գիտությունների ազգային ակադեմիայի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, «Տիգրան Մեծ հրատարակչության» և նախարարության մի շարք աշխատակիցներ պարգևատրվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարի շնորհակալագրերով:

ԱԳՐՈ Լրատու
Հունիս 5 - 18, 2015 թ.
թիվ 14 (2069)

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱ

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՅՈՒ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

«Կառավարեք ձեր պարտքերը և թույլ մի՛ տվեք, որ ձեզ կառավարեն պարտքերը: Որքան փոքր՝ այնքան կառավարելի են պարտքերը»:

«Համագործակցություն ի շահ բոլորի»՝ այս կարգախոսով է առաջնորդվում «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ, որն իր գործունեությունը սկսել է դեռևս 2007 թվականից: Ընկերությունն առայժմ վարկեր է տրամադրում հանրապետության 7 մարզերի՝ շարունակելով ընդլայնել աշխարհագրությունը: «Ֆարմ Կրեդիտը» լիզինգային ծառայություն է մատուցում հանրապետության բոլոր մարզերին: Կենտրոնական գրասենյակը գտնվում է Երևանում:

2014 թվականին գրանցել է 1 մասնաճյուղ, 2015 թվականին՝ ևս մեկը: Ներկայումս գործում է 8 գրասենյակ: Անդամ փայատերերի թիվն աճել է 960-ով՝ հասնելով 4500-ի: Ֆարմ Կրեդիտ Արմենինան տարեցտարի ցուցաբերում է զարգացման ու առաջընթացի միտումներ՝ հաստատելով իր կայուն դիրքը ֆինանսական շուկայում. «Վարկային պորտֆելն աճել է 39 %-ով, կազմելով ավելի քան 7,36 մլրդ ՀՀ դրամ: Ընդհանուր կապիտալն աճել է 30 %-ով՝ կազմելով ավելի քան 1,236 մլրդ ՀՀ դրամ». այս մասին 2014թ. հաշվետվությունը ներկայացնելիս, հայտարարեց կազմակերպության գլխավոր գործադիր տնօրեն Արմեն Գաբրիելյանը՝ Մասիսի տարածաշրջանի փայատերերի տարեկան ընդհանուր ժողովում: Նրա տեղեկացմամբ, մինչ այժմ տրամադրվել է 17,4 մլրդ ՀՀ դրամի վարկ և լիզինգ: «Վարկեր եմ ստացել թե գյուղատնտեսության, և թե գյուղական բիզնեսի զարգացման նպատակով: Խնդիրներ չեն առաջանում, քանի որ ճիշտ ենք տնօրինում վարկային ռեսուրսները: Ես երկարամյա վարկառու եմ: Այդ գումարով գնել եմ գյուղատնտեսական տեխնիկա, վար ու ցանք եմ կատարել: Միաժամանակ, կազմակերպել եմ գյուղմթերքի արտահանում, ինչպես նաև իրացում՝ ներքին շուկայում: Այդպիսով, տրամադրված վարկով հնարավորություն ենք ունեցել իրականացնել բազմաբնույթ աշխատանքներ»,- նշում է Նիզամի գյուղի բնակիչ Հարություն Կարապետյանը: Հովտաշատի բնակիչ Ալբերտ Հովհաննիսյանն էլ, 6 տարի շարունակ համագործակցելով վարկային կազմակերպության հետ, հիմնել է ժամանակակից սառնարանային և ջերմոցային տնտեսություն, որում ներդրվել է մեծ արդյունավետություն ապահովող կաթիլային ոռոգման համակարգը: Ընկերության տրամադրած վարկերի հետվերադարձելիությունը կազմում է 95,8 %, ինչը կազմակերպության աշխատակիցների արհեստավարժ գործունեության արդյունքն է: Ի դեպ, մասնագետների որակավորման բարձրացման նպատակով կազմակերպվել է 23 ուսուցում, որոնց մասնակցել է գրեթե ամբողջ աշխատակազմը: Մասնագիտական գիտելիքների ավելացումը հնարավորություն է ընձեռում ճիշտ գնահատել հատկացվող վարկերի ռիսկայնությունը, կատարել շուկայի վերլուծություն և այլն: Կազմակերպության կարևորագույն խնդիրը՝ կառույցի

զարգացումն ու հնարավորինս ցածր տոկոսադրույքներով փայատերերին վարկերի տրամադրումն է: Մասնաճյուղերը, որոնք տեղակայված են Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի, Կոտայքի և Սյունիքի մարզերում, իրականացնում են նպատակամղված գործունեություն՝ ֆերմերների հետ կայուն փոխհարաբերություններ ստեղծելու նպատակով: «Ունեմ ծիրանի այգի, միաժամանակ զբաղվում եմ եգիպտացորենի մշակությամբ և թռչնաբուծությամբ, աճեցնում եմ նաև ջերմատնային կարտոֆիլ: Այս ամենը «Ֆարմ Կրեդիտի» տրամադրած վարկերի շնորհիվ: Արդեն 5 տարի է՝ աշխատում եմ կազմակերպության հետ և շարունակելու եմ աշխատել, քանի որ հնարավոր չէ արդյունք ունենալ՝ առանց աջակցող գումարի»,- եզրահանգում է Ջրահովիտի բնակիչ Վարդան Գրիգորյանը: Վարկային այս կազմակերպությունը գյուղացու գործընկերն է: Տնօրեն Արմեն Գաբրիելյանի հավաստմամբ, հաջողված գործունեությունը ֆինանսական շուկայում պայմանավորված է նաև միջազգային և դոնոր կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ, ինչը հնարավորություն է ընձեռել բարելավել վարկավորման տեխնոլոգիաները: Հաշվետու ժողովում կազմակերպության ներքին աուդիտի բաժնի պետ Մեսրոպ Ավագյանը ներկայացրել է կանոնադրական փոփոխությունների նախագիծը: 2014թ. արտաքին աուդիտն անցկացրել է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ, որը բարձր է գնահատել կազմակերպության ֆինանսական գործունեությունը:

Օրերս կայացավ վարկային կազմակերպության Էջմիածնի մասնաճյուղի նոր հասցե տեղափոխված գրասենյակի բացումը (այն նախկին Կամո փ. 4/63 հասցեից տեղափոխվել է Մաշտոց-Սպանդարյան խաչմերուկ և գտնվում է 73/66 հասցեում): Գրասենյակի պաշտոնական բացման պատիվը շնորհվեց Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանին և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ Օլեգ Աղասյանին: «Ֆինանսական շուկայում իր յուրահատուկ դերն ունի «Ֆարմ Կրեդիտ Արմենիան»: Հատկանշական է, որ ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում անգամ ընկերությունը կարողացել է ապահովել դինամիկ աճ: Այսօր ընկերության ակտիվների 95 %-ը տնտեսություններին տրամադրված վարկերն են, որոնց 71%-ը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը»,- ողջույնի խոսքում նշել է Օլեգ Աղասյանը: Մասնաճյուղի բացմանը հաջորդեց Էջմիածնի տարածաշրջանային ընդհանուր ժողովը, որում անդամակցող ֆերմերներին տրամադրվել են նաև փայամասնակցային հավաստագրեր:

Օրերս հաշվետու ժողով կայացավ նաև Կոտայքի մարզի Արգել համայնքում: Նիստի շրջանակներում նախատեսված էր նաև հիշյալ տարածաշրջանից դիտորդ խորհրդի անդամի ընտրության հարցը: Բոլոր ժողովների ընթացքում քննարկվել են այն հարցերը, որոնք ուղղված են կազմակերպության կայացմանն ու զարգացմանը, իսկ վարկառուներին հետաքրքրող հարցերին տրվել են սպառիչ պատասխաններ:

Նելլի Սահակյան

ԱՍՈՒԼԻՍ

ENPARD ծրագրի մեկնարկը տրված է

Հայաստանում մեկնարկել է «Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման ծրագրով» (ENPARD) իրականացվող «Արտադրող խմբերի և արժեշղթաների զարգացում» ծրագրի շրջանակում, գյուղատնտեսական կոոպերատիվների հայտադիմումների ընդունումը, որի առիթով տեղի է ունեցել ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Արմեն Հարությունյանի և Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության միջազգային օգնության/համագործակցության պատասխանատու Ջոն Բարքերի համատեղ մամուլի ասուլիսը:

«Կոոպերատիվների ստեղծումը ՀՀ գյուղատնտեսության նախարարության գերակա ուղղություններից մեկն է: Մեր նպատակն է՝ պայմաններ ստեղծել Հայաստանում կոոպերացիայի զարգացման համար, իսկ մեկնարկող ծրագիրը միտված է նպաստել գյուղացիական միավորումների ստեղծմանն ու խթանել գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորումը», - նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Արմեն Հարությունյանը:

ENPARD (Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման) ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական Միության և Ավստրիական զարգացման գործակալության կողմից՝ գյուղատնտեսության կայուն զարգացման, արտադրող խմբերի և արժեշղթաների զարգացման նպատակով և իրականացվում է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի միջոցով: Ծրագիրը մեկնարկել է 2015թ.-ի հունվարին, տևողությունը 36 ամիս է: 2015թ.-ի հունվարին մեկնարկած 3,4 մլն. եվրո արժողությամբ եռամյա ծրագիրն իրականացվելու է ՀՀ Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց ձորի մարզերում:

Իր խոսքում Ջոն Բարքերը նշել է, որ ծրագիրն աջակցելու է գյուղատնտեսական մթերք արտադրող և վերամշակող խմբերին հետևյալ հարցերում՝ զարգացնել բիզնես կարողությունները, մշակել իրենց բիզնես ծրագիրը, ավելացնել արտադրության ծավալները, մշակել նոր արտադրանքի տեսականի, արդիականացնել վերամշակման համար անհրաժեշտ տեխնոլոգիաները, ընդլայնել տեղական և միջազգային շուկաներ մուտք գործելու հնարավորությունները, ինչպես նաև ներդնել գյուղատնտեսական լավագույն փորձի և աղետների ռիսկերի նվազեցման համակարգեր: Ծրագրի կողմից առաջնահերթությունը կտրվի մրգի, հատապտղի, բանջարեղենի, հացահատիկի և ընդեղենի, կաթի և կաթնամթերքի, ինչպես նաև այլ գյուղմթերքի արտադրության և վերամշակման ոլորտներում նորարարական գաղափարներ (նոր տեխնոլոգիա, նոր արտադրանք) առաջարկող խմբերին: Կանանց և երիտասարդների մասնակցությունը խրախուսվում է:

Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության միջազգային օգնության և համագործակցության պատասխանատու Ջոն Բարքերը հավելել է, որ ծրագրի հիմնական բաղադրիչներն ուղղված են գյուղմթերք արտադրող խմբերի ստեղծմանն ու ամրապնդմանը, վերջիններիս հնարավորինս արդյունավետ կերպով արժեշղթաների զարգացման գործում ներգրավմանը, ինչպես նաև մատչելի, բարձրորակ սննդամթերք ապահովող արժեշղթաների ամրապնդմանը:

Ծրագրի համակարգողները տեղեկացրեցին, որ ծրագրին մասնակցելու հայտադիմումը կարելի է ձեռք բերել ՀՀ գյուղատնտեսության նախարարությունից, մարզպետարաններից, գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններից, համայնքապետարաններից կամ ներբեռնել http://www.un.am/hy/procurements կայքից: Հայտադիմումների ընդունման վերջնաժամկետը ս.թ. հուլիսի 15-ն է:

Լիանա Շախնազարյան

ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՀԱՐՑԵՐ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) գլխավոր տնօրեն Գրացիանո դա Սիլվայի հրավերով, աշխատանքային այցով Հռոմում մասնակցել է ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) համաժողովին:

Համաժողովի ընթացքում քննարկվել են ՊԳԿ-ի Հազարամյակի զարգացման նպատակների առաջընթացին առնչվող հարցեր, ինչպես նաև Սնուցման հարցերով 2-րդ միջազգային համաժողովի, գյուղատնտեսության, անտառաբուծության, ձկնաբուծության հարցերով կայացած նիստերի արդյունքները:

Հռոմ կատարած աշխատանքային այցի շրջանակում, ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն առանձնազրույցներ է ունեցել Վրաստանի գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիայի, Իրանի Իսլամական Հանրապետության գյուղատնտեսության նախարար Մահմուդ Հոջաթիի, Իտալիայի գյուղատնտեսական, պարենային և անտառտնտեսական քաղաքականության նախարար Մաուրիցիո Մարտինայի և այլ պաշտոնատար անձանց հետ:

Առանձնազրույցի ժամանակ Վրաստանի գյուղատնտեսության նախարարը Հայաստանի գյուղատնտեսության նախարարին հրավիրել է Վրաստանի Հանրապետություն: Իսկ Իրանի Իսլամական Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հետ առանձնազրույցի ժամանակ, Հայաստանի Հանարպետության գյուղատնտեսության նախարարը վերահաստատել է Հայաստան այցելելու մասին իր հրավերը:

Հռոմում ընթացող ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) համաժողովի 39-րդ նստաշրջանի ընթացքում տեղի է ունեցել նաև ՊԳԿ գլխավոր տնօրենի ընտրությունը, որի արդյունքներով վերընտրվել է գործող տնօրեն Գրացիանո դա Սիլվան:

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը ՀՀ Նախագահի և վարչապետի անունից շնորհավորել է ՊԳԿ գլխավոր տնօրենին՝ վերընտրվելու կապակցությամբ և նրան հրավիրել Հայաստան: Ի պատասխան, ՊԳԿ նորընտիր գլխավոր տնօրեն Գրացիանո դա Սիլվան նշել է, որ այս տարի անպայման կայցելի մեր հանրապետություն:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ Է

Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանի բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսության ոլորտում, սակայն գյուղատնտեսական նշանակության հողերի կեսից ավելին չեն կարողանում մշակել, քանի որ գյուղտեխնիկան շատ քիչ է, եղածն էլ հիմնականում խորհրդային ժամանակներից է մնացել: Համայնքում չեն անցկացվում նաև ուսուցման դասընթացներ, մշակութային և սպորտային ենթակառուցվածքներն ունեն վերականգնման և կահավորման կարիք, համայնքներում կան խմելու ջրի և ոռոգման մեծ խնդիրներ, մեծ է նաև արտագնա աշխատողների քանակը:

Չնայած համայնքում զբաղվում են անասնապահությամբ, բայց կերային մշակաբույսերի մշակությունը գրեթե բացակայում է: Առկա է անասնապահության տոհմային բարելավման ցածր մակարդակ: Այն գյուղացիները, ովքեր ընդգրկված են եղել կոլտնտեսության աշխատանքներում և ծանոթ են տվյալ մշակաբույսերի մշակման հմտություններին, այժմ ի վիճակի չեն գյուղատնտեսական աշխատանքներ կատարել, իսկ երիտասարդները բոլորովին անտեղյակ են գյուղատնտեսական աշխատանքներից, հատկապես՝ հողագործությունից: Հետխորհրդային տարիներին, հողերի սեփականաշնորհումից հետո, դաշտավարության անկումը կարելի է բացատրել ոչ միայն գյուղտեխնիկայի բացակայությամբ կամ հնամաշությամբ, այլև սեփականաշնորհված փոքր տարածքներում գյուղտեխնիկա աշխատեցնելու ոչ նպատակահարմարությամբ, սերմացուների ձեռքբերման դժվարություններով, բուժանյութերի և պարարտանյութերի անորակությամբ, դրանց օգտագործման կուլտուրայի բացակայությամբ, ավելի ուշ՝ նաև նոր սերնդի հողագործության գիտելիքների բացակայությամբ: Արդյունքում՝ համայնքային և սեփականաշնորհված հողերի հիմնական մասը դարձել է խոպան և վերածվել խոտհարքի կամ արոտավայրի: Նույնիսկ որպես խոտհարք՝ հողերը լիովին չեն օգտագործվում:

Համայնքում, կարելի է ասել, խոշոր մշակելի հողատարածքներ չկան: Հիմնականում մշակում են տնամերձերը, որտեղ աճեցնում են սահմանափակ տեսակի բանջարեղեն՝ հիմնականում սեփական կարիքների համար:

Չկան արտադրական կամ վերամշակման ձեռնարկություններ: Ամսական եկամուտը, 1 անձի հաշվով, կազմում է միջինում 43000 դրամ, որը խիստ պակաս է ՀՀ սպառողական նվազագույն զամբյուղից (56000 դրամ): Համայնքում բնակիչների ֆինանսական դժվարություններն անհամեմատելի շատ են:

Խորհրդային տարիներին մարդիկ աշխատել են կոլտնտեսությունում, Ճամբարակի «Իմպուլս» գործարանում, ՃՇՇ-ում, Հայկոոպում, Հայգյուղքիմիայում, որոնք այժմ չեն գործում:

Քանի որ քիչ թե շատ պահպանված են անասնապահական ոլորտի ավանդույթներն ու հմտությունները, ապա գյուղացիներն ավելի իրատեսական են համարում անասնապահական որևէ կառույցի ստեղծումն ու ոլորտի զարգացումը:

Անասնապահության համեմատաբար բարվոք վիճակը պայմանավորված է նաև նրանով, որ կա իրացման հնարավորություն: Այստեղ կաթը մթերվում է «Աշտարակ կաթ», «Մարիանա» և «Թամարա» ընկերությունների կողմից, իսկ ոչխարը հիմնականում վաճառվում է կենդանի քաշով: Համայնքում չկան կենդանիների խնամքի ու պահվածքի բավարար գիտելիքներ ունեցող ֆերմերներ, ինչպես նաև արոտավայրերի և խոտհարքների շահագործման մշակույթ: Բարեկարգ վիճակում չէ սպորտային հրապարակը, ֆուտբոլի դաշտը, խաղահրապարակն ու մարզադահլիճը:

«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության («Շեն» ԲՀԿ) առաքելությունն է՝ հեռավոր ու խոցելի համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման խթանումն ու հզորացումը՝ համայնքների անդամների անմիջական մասնակցությամբ: Նոր գիտելիքների ու հմտությունների փոխանցման, աշխատատեղերի խթանման, համայնքային ենթակառուցվածքների բարելավման, համայնքային կազմակերպությունների հզորացման միջոցով, «Շեն»-ը փորձում է նմանատիպ համայնքներում ապրելու և գործելու համար նպաստավոր պայմաններ ստեղծել: Իր 37 աշխատակիցների հետ միասին, «Շեն»-ը, դրամաշնորհատու կազմակերպությունների և անհատ- ների օժանդակությամբ, Հայաստանում իրականացրել է տարբեր ծրագրեր՝ արձագանքելով համայնքների տնտեսական ու սոցիալական մարտահրավերներին:

Խոցելի համայնքների զարգացման նկատմամբ «Շեն»-ի հիմնական մոտեցումը համապարփակ համայնքային զարգացումն է, որը ենթադրում է համայնքի զարգացում՝ սկսելով ամենացածր մակարդակի կենսական պայմաններն ապահովելով (օրինակ՝ խմելու ջրի), ինչպես նաև նպատակ ունենալով խթանել տնտեսական գործունեության ծավալումը՝ որպես համայնքի կայունության հիմնական գործոն:

Ճամբարակի շրջանի բոլոր գյուղերը, այդ թվում՝ Թթուջուր գյուղը, ըստ «Շեն» ԲՀԿ չափանիշների, խոցելի համայնքներ են: Թթուջուր գյուղը գտնվում է Գեղարքունիքի մարզի վարչական տարածքի հյուսիս-արևելյան մասում. անունը ստացել է գյուղում գտնվող հանքային ջրի աղբյուրից:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առնվազն վերջին 10 տարիների ընթացքում, գյուղում չի իրականացվել հիմնախնդիրների լուծմանն ուղղված որևէ կայունություն ապահովող ծրագիր: Իսկ իրականացված ծրագրերից համայնքում որևէ ակնհայտ դրական տեղաշարժ չի եղել:

Համայնքային կյանքի խթանման, համայնքի բնակիչներին եկամուտ ստեղծելու հնարավորություններ տալու համար, «Շեն» ԲՀԿ կողմից մշակվել է Թթուջուր համայնքի զարգացման ռազմավարական ծրագիր, որի հիմնական նպատակն է՝ բարելավել համայնքի տնտեսական ցուցանիշները, բարձրացնել նրա մրցունակությունը: Համայնքի զարգացման ռազմավարական ծրագրի մշակումը կատարվել է համայնքի ներկայացուցչական ժողովի ժամանակ ընտրված նախաձեռնող խմբի ակտիվ մասնակցությամբ: Այդ խումբը կողմնորոշման հարցերում որոշում կայացնող դեր ունի: Ծրագրի մասնակիցները լիահույս են, որ իրականացման հաջողությունն ու արդյունավետությունը մեծ չափով կախված կլինի համայնքի՝ ծրագրին աջակցելու աստիճանից:

Հիմնվելով համայնքի վերաբերյալ հավաքված տվյալների և կատարված վերլուծությունների վրա՝ կազմվել է համայնքի զարգացման տեսլականը, որը տալիս է համայնքի զարգացմանն ուղղված քայլերի ռազմավարական հիմնավորումն ու համակարգումը: Ծրագրի տևողությունը 3 տարի է: Նախատեսված է, որ այն կապահովի համայնքի կայուն զարգացումը:

Համայնքներից արտագաղթը նվազեցնելու համար մեծ կարևորություն ունեն տնտեսական ծրագրերը: Հետևաբար, հաշվի առնելով լուրջ մտահոգությունը, սոցիալական, կրթական ու առողջապահական ծրագրերի հետ մեկտեղ, «Շեն»-ը մշակել է նաև մեկ այլ ծրագիր, որն ուղղված է ֆերմերների եկամուտների ավելացմանը: Դրանով առաջարկվում է ընտրված համայնքի համար մշակել տնտեսական զարգացման հնարավորություն, կրթական և սոցիալական բաղադրիչներ, քանի որ

4

ԱԳՐՈ Լրատու
Հունիս 5 - 18, 2015 թ.
թիվ 14 (2069)

ՀԱՐԾԱԶՐՈՒՅՑ

ՆՈՐ ՁՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

«Հայջրնախագիծ Ինստիտուտ» ՓԲ ընկերությունը հիմնադրվել է 1941թ., Հայաստանում իրականացրել է ջրի կառավարման, ոռոգման զարգացման ծրագրեր: 1996թ. այդ աշխատանքները գլխավորում է բազմափորձ ու ոլորտի գիտակ մասնագետ Յուրի Ջավադյանը: 1996թ. մինչ օրս ղեկավարում է «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ն: Թե ինչպիսի հսկայածավալ ծրագրեր են իրականացվել մեր հանրապետությունում ներկայացնում է Յուրի Ջավադյանը:

- Պարոն Ջավադյան, հանրապետությունում ինչ առաքելություն է իրականացնում Ձեր ղեկավարած ինստիտուտը:

- «Հայջրնախագիծ Ինստիտուտը» ոռոգման, ջրի կառավարման և զարգացման ծրագրեր է մշակել, որոնք հիմնականում իրականացվել են: Այստեղ աշխատածս տարիներին 3 անգամ հողերի մելիորատիվ վիճակի բարելավման և զարգացման ծրագրեր են մշակվել, կազմվել շուրջ 80 մեծ ու փոքր ջրամբարների նախագծեր: Հանրապետության տարածքում կազմավորվող մակերևութային հոսքերի 7,3 միլիարդ մ^3 ջրերից, մենք օգտագործում ենք ընդամենը 2,3 միլիարդ մ^3, հնարավորություն ենք տալիս մնացածը մեր սահմաններից հոսելու, որի մեջ մտնում է նաև խմելու ջուրը: Ընկերությունն Արարատյան դաշտավայրի համար աշխատանքներ է կատարել. 2 տարի առաջ «Մելիով» ՍՊԸ-ի հետ ուսումնասիրել ենք ջրի կառավարման վիճակը: Ջրի կառավարման ասպարեզում մեր կողմից հայտնաբերվել են թերություններ, որի պատճառով ունեցել ենք բավականին կորուստներ: Գրունտային ջրերի մակարդակը Արարատյան դաշտավայրի տարբեր տարածաշրջաններում իջել է 3-ից մինչև 15 մետր, մենք ունենք ճնշումային զոնա Արարատյան դաշտում, որը նախկինում ընդգրկում էր 32800 հեկտար տարածք, այժմ այն կազմում է 10700 հեկտար:

- Ինչպե՞ս է պետք կարգավորել այդ գործընթացը:

- Մենք ներկայացրել ենք առաջարկություն, ըստ որի՝ ստորերկրյա ջրերի մուտքն ու ելքը պետք է հավասարվեն: Դաշտավայրում ունենք մուտք 34,7 մ^3/վրկ, որը տարեկան կազմում է 1 մլրդ 80 մլն մ^3, այդքան էլ ելքը պետք է լինի, բայց վերջինս ներկայումս կազմում է 1 մլրդ 800 մ^3, որը թափվում է Արաքս գետը: Մեր խմելու ջրի պաշարների շուրջ 30 տոկոսը թափվում է Արաքս գետը և արդյունքում ստացվել է, որ Մեծամորի աղբյուրների ելքը 1991 թ. կազմել է 21 մ^3/վրկ, իսկ այժմ այն կազմում է 3.0 մ^3/վրկ: Ակնալճի ջրատվությունը պակասել է շուրջ 80 տոկոսով: Արարատյան դաշտավայրի 29 համայնքներում ունենք խմելու և ոռոգման ջրերի մատակարարման մեծ ռիսկեր: Մենք պարտավոր ենք և իրավունք չունենք խմելու և ոռոգման ջուրը պահանջարկից պակաս տրամադրել: Ոռոգման ջրի պահանջարկը չապահովելու դեպքում, մեծ վնասներ կկրենք, կվատանա հողի բերիության վիճակը, դաշտավայրում կստեղծվի կրկնակի աղակալման վտանգ: Գրունտային ջրերի մակարդակի իջեցման հետևանքով առաջանում են մեծ ռիսկեր՝ բնակելի տների կայունության և անվտանգության համար, փոխվել է նաև դաշտավայրի 20 հազար հեկտար ոռոգելի հողերի ստրուկտուրան:

- Ինչ աշխատանքներ են տարվում ձկնային տնտեսությունների հետ:

- Այս տեսակետից, հարկավոր է այնպես անել, որ ձկնային տնտեսությունները վնաս չկրեն: Մենք նրանց առաջարկել ենք անցնել ջրամատակարարման կիսափակ համակարգերի, և արդեն կա 2 կազմակերպություն: Գյուղատնտեսության նախարարության միջոցով դոնոր կազմակերպություններից գումարներ են տրամադրվում՝ 2-3 ձկնային տնտեսություններում ներդնելու համար կիսափակ ջրամատակարարման համակարգեր /պիլոտային ծրագիր/: Այս ընթացքում 100-150 փոքր ձկնային տնտեսություններ շարքից դուրս են եկել, չորացել են հորերը: Բնապահպանության նախարարությունն այդ ուղղությամբ լուրջ աշխատանքներ է կատարում՝ շատրվանող հորերը բերվում են փականային ռեժիմի, լուծարվում և կոնսերվացվում են անսարք և տիրազուրկ հորերը: Բոլոր դեպքերում պետք է արվի պիլոտային ծրագիր, որպեսզի հնարավոր լինի ճիշտ կառավարել եղած ջրերը՝ վնաս չտալով ձկան արտադրությանը: Ձկնային տնտեսությունները պետք է կատարեն ներդրում՝ ջրի խնայողաբար օգտագործման համար, պետությունն էլ պատրաստ է օգնելու: ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, իր գերատեսչական հանձնաժողովի միջոցով, ուսումնասիրել է և այդ արդյունքները շուտով կներկայացնի կառավարություն, որպեսզի հնարավորություն ստեղծվի կոոպերատիվների ստեղծման համար: Կոոպերացիայի ստեղծումը հնարավորություն կստեղծի մեխանիզացիան օգտագործել համատեղ, սերմերի, բուժանյութերի ծագումնաբանությունն իրենց հայտնի կլինի, շուրջ 33% շահույթ կունենան:

- Համագործակցու՞մ եք միջազգային նմանատիպ կազմակերպությունների հետ:

-Մենք համագործակցում ենք ֆրանսիական, գերմանական, կանադական կազմակերպությունների հետ: Մրցույթներին մասնակցում ենք նրանց միջոցով, նրանց հետ միասին, որպեսզի կարողանանք ներդնել նոր տեխնոլոգիաներ: Հատկապես կարևոր է ջրամբարների հակաֆիլտրացիոն միջոցառումների համար բենտոնիտային մատերի արտադրությունը: Ունենք լավագույն որակի բենտոնիտի հսկայական պաշարներ: Դրանք ձեռք ենք բերում Եվրոպայից, որտեղ շուրջ 30 տարի օգտագործվում է: Ֆիլտրացիոն գործակիցը 10-7-ի՝ 9^0 է, դա նշանակում է՝ այն լրիվ ջրամերձ է և միլիարդավոր տարիներ կարող է առանց վնասվելու մնալ գետնի տակ: Հակաֆիլտրացիոն միջոցառումները կարելի է կիրառել խոշոր ջրանցքների վրա: Տեղադրելու ենք 80 հազար մ^2 Գեղարդ լճի ջրամբարին, որը 2700 նշագծի վրա է. աշխարհում այդ բարձրության վրա քիչ ջրամբարներ կան: Մեզ համար կարևոր է փորձարկումն իրականացնել այդտեղ: Բուլղարիայից ներմուծվածի արժեքը կազմում է 7-7,5 դոլար, իսկ Իջևանի բենտոնիտի հանքերի բազայի վրա արդեն կան ներդրողներ: Մեզ մոտ արտադրվելու դեպքում, գինը կնվազի 45- 50 %-ով:

- Առաջիկայում ինչ ծրագրեր պետք է իրականացվեն, և հաշվի առնելով Ձեր երկար տարիների աշխատանքային մեծ փորձը, ոլորտին վերաբերող նոր առաջարկներ կան:

- Վարչապետի հանձնարարությամբ ես հիմնավոր փաստաթուղթ պետք է ներկայացնեմ: Քանի, որ 1927 թ. կոնվենցիայի համաձայն, Հայաստանն ու Թուրքիան Արաքսի ամբողջ ջուրը պետք է օգտագործեն 50-50%-ով՝ 53 մ^3/վրկ գլխամաս ունեն և Հայաստանը, և Թուրքիան: Բայց մենք հիմա օգտագործում ենք մեր 50%-ի ընդամենը 55%-ը, իսկ 45%-ը չենք օգտագործում, որովհետև չունենք համապատասխան պայմաններ: Մեր երկրի աշխարհագրական դիրքն այնպիսին է, որ ամբողջ ջրերը մեր երկրից հոսում են: Երեք ջրամբարների նախագծման աշխատանքները ընթացքի մեջ են: Պետք է կառուցվի Եղվարդի 90 մլն մ^3 ջրամբարը՝ ճապոնացիների կողմից, Կապսի 25 մլն մ^3 ջրամբարը՝ գերմանական գործակալության և Վեդիի 29 մլն մ^3 ջրամբարը՝ ֆրանսիական գործակալության միջոցով: Վեդիի ջրամբարը պատրաստ լինելու դեպքում, 8 պոմպակայաններ կապամոնտաժվեն, և ոռոգումը կապահովվի ինքնահոս ջրամատակարարմամբ:

Արաքս գետի և Արմավիրի մայր ջրանցքի ափին՝ Արևիկ գյուղի տարածքում, ունենք շուրջ 60 մլն մ^3 գրավի և կոպիճի ավազի հանքավայրեր, ինչպես նաև բազալտի հանքեր, և կառավարությունն արդեն հանձնարարել է Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը, որպեսզի նրանք հայտարարեն միջազգային մրցույթ՝ հանքերը օգտագործելու համար: Հանքերը շահագործելուց հետո, մենք կարող ենք ունենալ 60 մլն մ^3 սելավային ջրեր հավաքելու հնարավորություն: Նոր առաջարկ ենք ներկայացրել՝ կառուցելու 12 մլն. մ^3 ծավալով ջրամբար Քասախ գետի վրա, ինչպես նաև՝ Գեղարդալճի ջրամբարը՝ 3 մլն մ^3 ծավալով: Պատրաստվում ենք ներկայացնել առաջարկություն, որպեսզի մելիորացիայի զարգացումը և ոռոգելի հողատարածությունների ընդլայնումը հատուկ տեղ գտնի ՀՀ Գյուղատնտեսության նախարարության 2015-2025թթ. զարգացման ծրագրում:

Մեծ ուշադրություն պետք է դարձնենք բնության տարերքների դեմ պայքարելուն. հակակարկտային երկու միջոցառում կա՝ կայանները, որոնք տեղակայված են և գործում են, մյուսն էլ՝ ցանցերը: Ցանցերի համար նախատեսված թաղանթը ներմուծվում է դրսից: Շուտով մեզ մոտ ևս կստեղծվի հնարավորություն, վերջինիս արտադրությունն ավելի էժան ձեռնարկելու. ներդրող կազմակերպություններն են՝ Չինաստանը, Անգլիան, մնացածը՝ ռուսական և մեր տեղական կազմակերպություններն են: Այդ տեսակի նյութերի պատրաստման համար կօգտագործվի կվարցը, կունենանք մատչելի արտադրություն՝ խաղողի հենասյունների /շպալների/, պտղատու ծառերի ու խաղողի ծածկերի արտադրման համար: Որպեսզի հարմարավետ լինի ծառերը ծածկելը՝ պետք է հիմնել նոր, ինտենսիվ այգու տնկիներ, որպեսզի ծառերը շատ չբարձրանան: Ցանցերի կարևորությունը կայանում է նրանում, որ բուսականությունը կազատվի տարաբնույթ վարակներից, որոնք գալիս են բզեզների ու մեղուների միջոցով, իսկ կարկուտն էլ չի փչացնի բերքը: Այդ ուղղությամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը մեծ աշխատանքներ է կատարում:

ՄԱՆՎԵԼ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

4 ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ Է

նշված ոլորտների խնդիրներին կարելի է անդրադառնալ համակարգային եղանակով: Նախատեսվում է, որ առաջարկող միջամտություններն առնվազն 30 %-ով իրենց ազդեցությունը կունենան գյուղացիների եկամուտների վրա:

Չնայած ծրագրի բյուջեն սպառվելու է ծրագրի իրականացման երրորդ տարում, այնուամենայնիվ «Շեն»-ը ստանձնում է ծրագրի հետագա ընթացքին հետևելը և մշտադիտարկման աշխատանքների կատարումը՝ ծրագիրը հասցնելով երկարաժամկետ կայուն կետի:

Ռազմավարական ծրագրում առաջնահերթությունը տրվել է գյուղատնտեսության զարգացման նպատակով ինֆրակառուցվածքների զարգացմանը, մեքենատրակտորային պարկի ստեղծմանը, խոտհարքների և արոտավայրերի շահագործման մշակույթի ձևավորմանը, դեգրադացված վարելահողերի վերագործարկմանը: Հիշյալ ենթածրագիրն իր ազդեցությունը կունենա ողջ համայնքի վրա, քանի որ գրեթե բոլոր տնային տնտեսությունները զբաղվում են անասնապահությամբ և ունեն սեփականաշնորհված վարելահողեր, որոնք վերածված են խոտհարքերի: Խոտի քանակի ավելացումն ու ավելցուկ մասի վաճառքը հնարավոր կդարձնի անասնագլխաքանակի ավելացումը, որը նույնպես կավելացնի գյուղացիների եկամուտները: Կենդանիների գլխաքանակի ավելացմանն ու կաթնատվության ավելացմանը մեծապես կօգնի հեռագնա արոտավայրերի մշակույթի վերականգնումը՝ ժամանակակից մեթոդով:

Ծրագիրը ներկայացվել է կանադական «Յալկեզյան հիմնադրամ» և ստացել հիմնադրամի աջակցությունը: Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակի բարելավման և բնակիչների եկամուտների ավելացման ամենագործուն մեխանիզմը հենց մարդկանց համար արդյունավետ աշխատելու հնարավորության ստեղծումն է: Այս գլխավոր նպատակին հասնելու համար, ձեռք է բերվել նոր գյուղատնտեսական տեխնիկա (գութան, հացահատիկի շարքացան, սկավառակավոր փխրեցուցիչ), կառուցվել է գյուղտեխնիկայի ծածկով կայանատեղի, որի համար «Շենը» տրամադրել է բոլոր անհրաժեշտ նյութերը, իսկ աշխատանքներն անհատույց ձևով իրականացրել են «Թթուջուր համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի անդամները:

Խոտհարքերի վերածված վարելահողերի վարման համար, Վարդենիսից վարձակալվել է հզոր տրակտոր, որը, չնայած անբարենպաստ կլիմայական պայմաններին, հասցրել է 40 հա տարածքի վրա կատարել վարը, որից հետո կոոպերատիվի ունեցած տրակտորին կցելով նոր ստացված տեխնիկան, կատարել է փխրեցումն ու գարու ցանքը: 2015թ. համար նախատեսված մնացած 60 հա-ի վարը կկատարվի աշնանը: Եվս 150 հա կվարվի 2016 թվականին: Ստացված նոր գութանը հնարավորություն է ընձեռել կոոպերատիվի ունեցած «Բելոռուս» տրակտորով վարել տնամերձերը:

Կահավորվել է կոոպերատիվի սենյակը, որին «Շենը» տրամադրել է մասնագիտական պաստառներ, գյուղի մեծադիր քարտեզը և անհրաժեշտ մասնագիտական գրականություն: Իսկ կոոպերատիվի անդամների համար կազմակերպվել է կոոպերատիվի աշխատանքների կառավարմանը նվիրված սեմինար:

Սոֆյա Գալֆայան
«Շեն» ԲՀԿ Ճամբարակի տարածաշրջանի
մարզային պատասխանատու

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

«ՓՈՐՁԵՆՔ ՀԱՍԿԱՆԱԼ ՈՒ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ՄԵԿՆԵԼ ՆՐԱՆՑ»

Գեղարքունիքի մարզի Անտառամեջ համայնքը, որը շրջապատված է 765 հա անտառներով, ունի տնտեսական զարգացման մեծ ներուժ: Վայրի տանձենիները, հատապտղային թփերն առատորեն բերք են տալիս, սակայն գյուղը չունի վերամշակման թեկուզ փոքրիկ արտադրամաս, որտեղ կարելի էր պահածոյացնել կամ չրի վերածել անուշահամ մրգատեսակները:

Գյուղապետ Կառլեն Մարտիրոսյանի կարծիքով՝ վերաբնակեցված այս գյուղն աջակցության կարիք ունի:

Տնամերձ հողատարածքներում հիմնականում արտադրվում է տանձ և խնձոր, որոնք գյուղացին իրացնում է մեծ դժվարությամբ: Պատճառն այստեղ բնակիչների ցածր գնողունակությունը չէ, և ոչ էլ՝ արտադրված մրգի որակական հատկանիշները: Պարզապես գյուղ տանող և գյուղամիջյան ճանապարհներն են անբարեկարգ վիճակում: Քանդված ճանապարհներով կարողանում են երթևեկել միայն ամենագնաց ավտոմեքենաները: Իսկ գյուղացին չունի այդպիսի ավտոմեքենաներ ձեռք բերելու հնարավորություն: Գյուղապետի տեղեկացմամբ, վերջերս տեղացած հորդառատ անձրևների հետևանքով, սելավաջրերը քշել-տարել են ճանապարհների վերին հողաշերտերը՝ այդպիսով ավելի անբարեկարգ դարձնելով դրանք: «Գյուղի բյուջեն չի կարող բավականացնել քանդված ճանապարհների հիմնանորոգման համար: Խնդիրը հնարավոր է լուծել միայն պետական ծրագրերի կամ հովանավորների աջակցությամբ: Վատթար ճանապարհների հետևանքով, գյուղացին չի կարողանում մթերել կաթը: Ստիպված այն վերածում է պանրի, որն էլ ցածր արժեքով է գնվում միջնորդ վերավաճառողների կողմից»,- նշում է գյուղապետը: Ի դեպ, նույնպիսի դժվարությամբ են իրացվում նաև անասնապահական ծագման մյուս մթերքները, մասնավորապես՝ միսը: Մինչդեռ բուսածածկով հարուստ արոտավայրերն ու խոտհարքնե-

րը ընձեռում են բոլոր հնարավորությունները անասնապահության զարգացման համար: Դժվարություններով հանդերձ՝ գյուղացին, այնուամենայնիվ, շարունակում է զարգացնել անասնապահական ճյուղերը: Գյուղապետարանի տվյալներով, արդեն առկա է 140 գլուխ խոշոր, 100 գլուխ մանր եղջերավոր կենդանի: Երկարատև դադարից հետո, սկսել են զբաղվել նաև խոզաբուծությամբ, խոզերի գլխաքանակն արդեն գերազանցում է 100-ը: Անասնապահության բոլոր ուղղություններով արձանագրվում է անասնագլխաքանակի աճի միտում: Գյուղը նպաստավոր է նաև մեղվաբուծության զարգացման համար (արտադրվում է լորենու ծաղկի բարձրորակ մեղր), սակայն այստեղ ևս առկա է իրացման խնդիրը: Այդուհանդերձ, մեղվաընտանիքների քանակը նույնպես ավելանում է (ներկայումս այն հասնում է 110-ի): «Գյուղն ունի նաև ջերմոցային և տնկարանային տնտեսությունների ստեղծման լայն հնարավորություն: Տնտեսական գործունեություն սկսելուց հետո, նորաստեղծ ընտանիքները, որոնց թիվն առայժմ 20 է, կարող են նաև իրենց համար տներ կառուցել, սակայն նրանք առայժմ այդ հնարավորությունը չունեն: Գյուղի բնակիչների թիվը 220 է, որոնց մի մասը, տնտեսական և կենցաղային խնդիրները կարգավորելու նպատակով, մեկնում են արտագնա աշխատանքի: Համոզված եմ, որ աշխատատեղեր լինելու պարագայում, նրանցից ոչ մեկը չի հեռանա գյուղից»,- եզրահանգում է գյուղապետը: Նրա կարծիքով, միջազգային և դոնոր կազմակերպությունները նույնպես կարող են իրականացնել որոշ ծրագրեր, որոնք կարող են փոխել իրավիճակը: «Չէ որ ամեն ինչ կորցրած մարդիկ եկել են իրենց հայրենիքը, իրենց տունը շենացնելու: Փորձենք հասկանալ ու օգնության ձեռք մեկնել նրանց»,- հավելում է գյուղապետը:

Անտառամեջն ունի նաև խմելու և ոռոգման ջրի խնդիրներ: «Շեն» բարեգործական հիմնադրամը 700 մ երկարությամբ ջրագիծ է հիմնանորոգել, սակայն խնդիրն այդպիսով վերջնականապես չի լուծվել: Տարիներ առաջ «Քարավան-88» ՀԿ-ն հիմնանորոգել է գյուղապետարանի շենքը, սակայն դրանից հետո, մինչ օրս սահմանային գյուղում աջակցության այլ ծրագրեր չէն իրականացվել: «Ցանկալի է, որ համայնքների համաչափ զարգացման գաղափարը մեր գյուղում իրականություն դառնար: Գյուղացին հույս ու հավատով սպասում է նոր ծրագրերի: Մարդիկ պատրաստակամ են աշխատելու, նրանք սիրում են իրենց երկիրը»,- նշում է գյուղապետ Կառլեն Մարտիրոսյանը: Ի դեպ, գյուղի սոցիալապես անապահով ընտանիքներին մշտապես աջակցում են «Կարրիտաս» և «Դիակոնիյա» կազմակերպությունները՝ անվճար տրամադրելով սննդամթերք: Գյուղացին գոհ է աջակցությունից, սակայն այսօր առավել ևս կգերադասեին արտադրել, արարել, բարիքներ ստեղծել և օգնել կարիքավորներին…

Նելլի Սահակյան

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂՄԹԵՐՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ԽՆԱՅՈՂԱԲԱՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

***Սննդային թափոնները, որոնք, մեկ անձի հաշվով տարբեր գնահատականներով, աշխարհում օրեկան 3-4 կիլոգրամ են կազմում, այսինքն՝ տարեկան կտրվածքով, մեկ տոննայից ավելի են, ընդհանուր թափոնների զգալի մասն են կազմում: Կորուստները սկսվում են վեգետացիայի ընթացքում, շարունակվում բերքահավաքի ժամանակ (ըստ հեղինակավոր փորձագետների՝ դրանք գնահատվում են միջինը աշխարհի մասշտաբով՝ միջինը որպես բերքի 1/5-ական*

մաս) այնուհետև՝ առևտրային կազմակերպությունների և սպառողի կողմից ավելանում են (առնվազն՝ նույնքան): Այսինքն ստացվում է, որ մարդկության կողմից մթերք արտադրելու վրա ծախսված ժամանակի, ֆինանսական միջոցների և այլ ռեսուրսների ամենաքիչը կեսը, փաստորեն, վատնվում է:

Իհարկե, այս երեք ուղղություններով էլ մարդկությունը ջանում է ինչ-որ բան անել և թեպետ մասնակի, հասնում է հաջողությունների. առաջին մասով՝ դա էկոլոգիամետ գյուղատնտեսության տարատեսակներն են՝ կենսաբազմազանության ընդհանուր բաղադրիչով, երկրորդում՝ ճշգրիտ երկրագործության դանդաղ, բայց, այնուամենայնիվ, տարածվող տեխնոլոգիաներն են, իսկ երրորդն ավելի մանրամասն կներկայացնենք՝ ցույց տալով տարբեր երկրների փորձն ու հուսադրող հեռանկարները:

Կորուստների այս երրորդ բաղադրիչը գուցեև ամենակարևորն է, քանի որ նշված վատնված միջոցներից բացի, աղտոտվում է նաև շրջակա միջավայրը: Այդ պատճառով է, հավանաբար, որ պարենային թափոնների օգտահանման խնդիրներով մտահոգվում են ոչ միայն առանձին կամավոր բնասերները, ազդեցիկ մեծահարուստներն ու կազմակերպությունները, այլև՝ պետական կառույցները, որոնց ջանքերը հետագայում վավերացվում են օրենսդրական նախաձեռնություններով, որով և ապահովվում է արդեն հաջողված նախաձեռնությունների շարունակականությունը:

Ֆրանսիան, որ առաջիններից մեկը գնաց այդ ճանապարհով, տարեկան մոտ 7,5 միլիոն տոննա մթերք է թափում: Կարծելով, որ դրա մեղավորը առևտրի կենտրոններն են, այլ ոչ թե վերջիններիս համոզմամբ՝ սպառողները, պետությունն օրենք ընդունեց, որով առևտրի կենտրոնները պարտավորվում են ավելի երկար ժամանակ պահել մթերքը վաճառքում՝ իհարկե, ոչ սանիտարական չափանիշների խախտման հաշվին: Այսինքն՝ ավելի պատասխանատու մոտենալ դրա հետագա ճակատագրին՝ առաջարկելով այն բարեգործական կազմակերպություններին, անասնատերերին, նպաստել, որպեսզի այն օգտագործվի կոմպոստի կամ կենսաէներգիայի ստացման համար: Համապատասխան համակարգում ընդգրկված լինելու վերաբերյալ պայմանագիր չունեցող առևտրի կենտրոնը տուգանվում է 75 հազար եվրոյով: Մինչ Ֆրանսիայի այս խիստ նախաձեռնությունը կտարածվեր երկրում, Անգլիան յուրովի փորձեց լուծել խնդիրը. գործընթացը նույնպես ավարտվեց օրենսդրական նախաձեռնությամբ, բայց պիլոտային ծրագրի իրականացումից հետո: Sainsbury's store առևտրի կենտրոնների ցանցում որոշում ընդունվեց չիրացված մթերքը բաժանել 3 մասի. առաջինը՝ չնչին գումարներով տրամադրվում է բարեգործական կազմակերպություններին, երկրորդը՝ նույնպես չնչին գումարներով տրամադրվում է ֆերմերներին՝ որպես անասնակեր կամ կոմպոստացման համար, և վերջապես, այդ երկու նպատակներին ոչ պիտանի մասն ուղարկվում է Կեննոք (տես՝ հաջորդիվ), որտեղ դրանից ստանում են մեթան, ապա էլեկտրաէներգիա, որն էլ՝ 1,5 կմ երկարությամբ մալուխով հասցվում է առևտրի կենտրոնին և այլ սպառողներին: Նախաձեռնությունն առաջին անգամ իրականացնելու համար, Կեննոք քաղաքի (Վեսթ-Միդլենդս կոմսություն) առևտրի կենտրոնը գտավ թափոններ վերամշակող Biffa ընկերությանը, և երկու տարի համագործության արդյունքում, հայտ ներկայացվեց ազգային էլեկտրացանցերին՝ նրանց ծառայություններից հրաժարվելու մասին: Պիլոտային ծրագիրը ոչ միայն տվյալ սուպերմարկետի, այլ շրջակա ևս 2500 շենքերի համար էլեկտրաէներգիա էր ապահովում: Պետությունը հաջորդ նման ծրագրերի ֆինանսավորմանն ավելի ակտիվ մասնակցություն ունեցավ, որոնց թիվը գնալով աճեց: Երկրում այժմ գործում են 60-ից ավելի մթերային թափոններ վերամշակող գործարաններ, որոնք տարեկան վերամշակելով 2,5 միլիոն տոննա թափոն՝ Կեննոքը երեք անգամ գերազանցող քաղաքը լիովին ապահովում են էլեկտրաէներգիայով՝ միաժամանակ, կանխելով միջավայրի աղտոտումը:

Ավելի փոքր մասշտաբի նախաձեռնություններ ծավալվում են այլ երկրներում և առանձին քաղաքներում: Օրինակ, Լիսաբոնում կազմակերպված նոր Fruta Feia (անճոռնի պտուղ) կոոպերատիվը, որը հիմնականում մասնակցում բարեգործական ծրագրերի իրականացմանը, ընդունված խիստ չափանիշներին չհամապատասխանող միրգն ու բանջարեղենը սպառողին կես գնով է առաջարկում ու միաժամանակ քարոզում, որ հարկ չկա կրկնակի վճարել ավելի գեղեցիկ տեսք ունեցող ապրանքի համար այն դեպքում, երբ, համային առումով, դրանք գրեթե չեն տարբերվում:

Այս ազնիվ ուղին բռնած պետություններին, մեծ ու փոքր կազմակերպություններին ու մարդկանց հուսադրենք, որ նոր ճանապարհով գնացողին բարի ուժերն օգնում են: Այդպիսի ուժերին է պատկանում Ջորջիայի (ԱՄՆ) Տեխնոլոգիական ինստիտուտի հետազոտական խումբը, որը թափոնների վերամշակման համար բակտերիա-դեստրուկտորները, որոնք ճեղքում են օրգանական բնական պոլիմերների մոլեկուլները, կարողացավ փոխարինել շատ էժան և ավելի արդյունավետ՝ պոլիօքսոմետալատ կոչվող կատալիզատորով, որը ոչ մի հատուկ պայման չի պահանջում գործելու համար:

Ինչ վերաբերում է նրան, թե բախտը երբևէ մեր դռանն էլ կչոքի, ապա բավականին հուսադրող է «Երևան ջուր» ընկերության Veolia Group օպերատորի հայտարարությունն այն մասին, որ իրենք ոչ միայն մտադիր են մնալ երկրում, այլև, ջուր մատակարարելու հետ մեկտեղ, զբաղվել նաև կոյուղու և թափոնների վերամշակմամբ: Մնում է, որ մեր հասարակությունը սկսի սննդամթերքին ավելի խնամքով վերաբերվել, որին մեծապես կարող է նպաստել համապատասխան մշակված պետական քաղաքականությունը:

Վ Հ

ԱԳՐՈ Լրատու
Հունիս 5 - 18, 2015 թ.
Թիվ 14 (2069)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽԱՂՈՂԻ ՎԱԶԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խաղողի վազի տարածված և տնտեսական մեծ վնաս հասցնող հիվանդություններից են՝ միլդիուն, օիդիումը, անտրակնոզը, մոխրագույն փտումը, որոնց դեմ ժամանակին ու ճիշտ պայքար չտանելու դեպքում, զգալիորեն նվազում է բերքը, ընկնում որակը:

ՄԻԼԴԻՈՒ ԿԱՄ ԿԵՂԾ ԱԼՐԱՑՈՂ

Արարատյան դաշտավայրում միլդիուն հայտնի է «չոռ», հյուսիս-արևելքում՝ «կարմրուկ», իսկ այլ շրջաններում՝ նաև «խորշուկ» անուններով: Հիվանդության զարգացումը պայմանավորված է եղանակային գործոններով և հաճախ սկսվում է արդեն մայիսի սկզբներին: Վարակվում են վազի կանաչ օրգանները: Տերևների վրա ի հայտ են գալիս դեղնավուն,



կլոր բծեր, խոնավ եղանակին տերևի հակառակ մակերեսին, բծերին համապատասխան տեղերում, առաջանում է ալրանման (կեղտասպիտակավուն) փառ, որը սնկի սպորակրությունն է: Հետագայում տերևի վրայի բծերը ստանում են կարմրագորշավուն երանգ՝ այրվածքի նման:

Հիվանդության զարգացմանը հատկապես նպաստում են օդի բարձր հարաբերական խոնավությունը, տևական անձրևները:

Պայքարի միջոցառումները

Միլդիուի և խաղողի վազի մյուս հիվանդությունների դեմ արդյունավետ պայքարի համար անհրաժեշտ է վաղ գարնանը հեռացնել վարակված տերևներն ու շվերը, ժամանակին կատարել շվատում և բճատում, չոր և կանաչ կապ, համալիր պարարտացում: Քիմիական պայքարի առումով, առավել արդյունավետ են ֆունգիցիդներով նախազգուշական սրսկումները, միլդիուի դեմ առաջին սրսկումը հարկ է կատարել տևական անձրևներից հետո, երբ օդի միջին ջերմաստիճանը 10-12°C է:

Սրսկման ժամկետն ընտրելիս, ճիշտ կլինի առաջնորդվել, կողմնորոշվել վազի զարգացման փուլերով: Այսպես, առաջին սրսկումը պետք է կատարել, երբ առաջացել են 3-5 իսկական տերևներ, երկրորդը՝ ծաղկումից առաջ, երրորդը՝ ծաղկումից հետո: Անհրաժեշտության դեպքում, սրսկումները շարունակել 10-15 օր ընդմիջումներով: Առաջարկվում է բորդոյան հեղուկի 1 %-անոց լուծույթ (10 լ ջրին՝ 100 գրամ չհանգած կիր + 100 գրամ պղնձարջասպ): Կիրը և պղնձարջասպը պատրաստվում են առանձին՝ ոչ մետաղյա տարաներում, ապա պղնձարջասպը լցվում է կրաջրի վրա, ռիդոմիլ գոլդ 68 0,25 % (10 լիտր ջրին՝ 25 գրամ), ռիդոմիլ գոլդ պլյուս 4-5 կգ/հա, ռեվուս տոպ 500 ԽԿ՝ 0,5-0,6 կգ/հա, կուպրոկսատի 0,5 % (10 լիտր ջրին՝ 50 գրամ) պատրաստուկներով: Ցանկալի և արդյունավետ է վերը նշված պատրաստուկների փոխնիփոխ կիրառումը:

ՕԻԴԻՈՒՄ ԿԱՄ ԻՍԿԱԿԱՆ ԱԼՐԱՑՈՂ

Արարատյան դաշտավայրում այն անվանում են «սև», հյուսիս-արևելքում՝ «թոզ»: Տարածված է խաղողագործական բոլոր շրջաններում, զարգացումը սկսվում է, սովորաբար, մայիսի կեսերին: Տերևների վրա առաջանում են փոքր, կլոր բծեր, որոնք պատված են սպիտակ, ալրանման փառով: Ծվերը կարող են վարակվել մինչև վազի ծաղկելը, վարակը տարածվում է ծաղկափթթությունների, տերևների ու պտուղների

վրա: Վաղ վարակի դեպքում պտուղները դադարում են աճել, չորանում և ընկնում են, ուշ վարակվելիս՝ պտուղը պատվում է սպիտակամոխրագույն փառով, պատռտվում է, վարակը կարող է հասնել մինչև սերմերը, խոնավ եղանակին այդպիսի պտուղներն արագ փտում են:

Պայքարի միջոցառումները

Քանի որ հիվանդությունը ձմեռում է վարակված շվերում՝ շատ արդյունավետ է վարակված շվերը հեռացնելն ու ոչնչացնելը: Արդյունավետ են ծծմբային պատրաստուկները՝ աղացած ծծումբ, հեկտարին՝ 25-30 կգ, կոլոիդ ծծմբով՝ 9-10 կգ/հեկտարին (1%-անոց կախույթով): Բարձր արդյունավետություն են ցուցաբերում բայլետոնով կամ տոպազով՝ հեկտարին 250-300 գրամմլ, սրսկումները (ձեռքի սրսկիչներով սրսկելիս, 5 գրամ՝ 10 լ ջրին), կվադրիս մաքս 533,5 ԽԿ (արդյունավետ է միլդիուի, օիդիումի, մոխրագույն փտման դեմ)՝ 1,5-2 կգ/հա, էմբրելիա 140 ԽԿ՝ 1,2-1,5 լ/հա:

Ճիշտ և արդյունավետ է առաջին սրսկումը կատարել բողբոջների ուռչման փուլում, երկրորդը՝ ծաղկումից առաջ, երրորդը՝ ծաղկումից հետո, անհրաժեշտության դեպքում՝ 14-15 օր ընդմիջումներով կատարել հաջորդ սրսկումները:

Սրսկումները հարկ է դադարեցնել բերքահավաքից առնվազն 20-25 օր առաջ: Օիդիումի զարգացմանը նպաստում է միակողմանի կամ նորմայից ավելի ազոտական պարարտացումը:

ՄՈԽՐԱԳՈՒՅՆ ՓՏՈՒՄ

Հիվանդությունը ուժեղ է զարգանում հատկապես տևական անձրևներից հետո: Վարակվում են միայն պտուղները, որոնք պատվում են մոխրագույն փառով, ունեն անդուր համ: Վաղ վարակի դեպքում՝ պտուղները կարող են լրիվ չորանալ, փչանալ: Հիվանդությանը նպաստում է վնասատուներով, հատկապես՝ ողկուզակերով վարակվելը:

Պայքարի միջոցառումները

Արդյունավետ են ֆունդազոլի 0,2, ռավրալի 0,15, բայլետոնի և տոպազի 0.05 %-անոց լուծույթներով սրսկումները: Առաջին սրսկումը ծաղկումից առաջ, երկրորդը՝ պտուղների կազմակերպման սկզբում, հետագայում՝ 15-18 օր ընդմիջումներով: Ժամանակին ու ճիշտ պայքար տանել վնասատուների, հատկապես՝ ողկուզակերների դեմ:

Մոխրագույն փտումով վարակված խաղողի ողկույզներ

ԽԱՂՈՂԻ ԱՆՏՐԱԿՆՈԶ

Հիվանդությունը տարածված է խաղողագործական բոլոր շրջաններում, սովորաբար՝ օջախներով: Հանրապետությունում այն հատկապես մեծ վնաս է պատճառում Տավուշի մարզում:

Անտրակնոզը մեծ վնաս է հասցնում հատկապես այն տարածքներում, որտեղ օդի բավարար հարաբերական

խոնավությունը զուգակցվում է բարձր ջերմաստիճանի հետ: Հիվանդության հարուցիչը սունկն է: Այս հիվանդությամբ վարակվում են վազի բոլոր կանաչ օրգանները՝ շվերը, պտուղները, տերևները, տերևակոթերը: Ամենից շատ հիվանդությունն արտահայտվում է տերևների վրա, ըստ որում՝ դրանց առաջանալուց անմիջապես հետո, սկզբում՝ հազիվ նկատելի բաց դարչնագույն կետերի, բծերի տեսքով: Հետագայում, բծերը մեծանալով, դառնում են գորշավուն՝ մուգ մանուշակագույն երիզով, որից հետո, հիվանդ հյուսվածքը թափվում, ընկնում է, իսկ տերևը ծակծկվում: Տերևակոթունների, ինչպես նաև տերևի ջղերի վրա, բծերն ընդունում են խոցերի տեսք: Վարակի ուժեղ արտահայտման դեպքում, տերևները կարող են նույնիսկ թափվել:

Պտուղների վրա բծերը թեթևակի սեղմված են, ներս ընկած, կլորավուն, սկզբում՝ մուգ մանուշակագույն, պարփակված մանուշակագույն երիզով: Շատ վտանգավոր է շվերի վարակվելը: Սկզբում առաջանում են ոչ մեծ, գորշ բծեր, որոնք շվերի աճելու, մեծանալու հետ ձգվում, խորանում են, ընդունելով ձգված խոցերի տեսք: Հետագայում բծերն ընդունում են սուրճի գույն, որը մանուշակագույն երիզ ունի: Խոցերի եզրերն անհավասար են: Ուժեղ վարակի առկայության դեպքում, խոցերը միանում, ձուլվում են՝ օղակաձև ընդգրկելով շիվը: Այդպիսի շվերը տձև են և կոտրվող:

Պայքարի միջոցառումները

Աշնանը կտրել, հեռացնել անտրակնոզով վարակված շվերը, մաքրել այգիները թափված տերևներից, չորացած պտուղներից, ճյուղերից (մատերից):

Ժամանակին կատարել չոր և կանաչ կապը, ծերատումը, բճատումը:

Կատարել նախազգուշական սրսկումներ այն ֆունգիցիդներով, որոնք առաջարկվում են միլդիուի դեմ՝ բորդոյան հեղուկ՝ 1%-անոց, կուպրոկսատ՝ 5 կգ/հա, անտրակոլ՝ 2 կգ/հա, պոլիխոմ՝ 6 կգ/հա, պղնձի օքսիքլորիդ՝ 6 կգ/հա, ռիդոմիլ գոլդ 68՝ 2.5 կգ/հա և մյուս պատրաստուկները, որոնք կիրառվում են միլդիուի դեմ:

Որոշիչ նշանակություն ունի սրսկման ժամկետը: Առաջին սրսկումը հարկ է կատարել առաջին տերևների հայտնվելուն պես (կարելի է համատեղել տրիպսների դեմ կատարվող սրսկման հետ): Երկրորդ սրսկումը կատարել ծաղկումից առաջ, երրորդը՝ ծաղկումից անմիջապես հետո:

Ալֆրեդ Գրիգորյան,
կենսաբանական գիտությունների թեկնածու

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԿ-ՆԵՐԻ ՀԵՏ

ՀՀ ԳՆ «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը հերթական անգամ ձեռնամուխ եղավ հասարակական կազմակերպություններին իր շուրջը համախմբելու. այդ առիթով, կազմակերպել էր հերթական այցելությունը դեպի ՀՀ ԳՆ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Սևքարի անտառտնտեսություն» մասնաճյուղ՝ վերջին տարիներին իրականացված անտառվերականգնման աշխատանքներն ուսումնասիրելու նպատակով:

Համատեղ դիտարկմանը մասնակցում էին «Կանաչների միություն» ՀԿ-ի նախագահ Հ. Սանասարյանը, «Շողեր միություն» ՀԿ-ի նախագահ Հ. Ասլանյանը, «Էկոլուր» ՀԿ-ի աշխատակից Մ. Երիցյանը, «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիա ՀԿ-ի աշխատակիցները և «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատակիցները՝ տնօրեն Ա. Գյուլխասյանի գլխավորությամբ: «Սևքարի անտառտնտեսություն» մասնաճյուղում տնօրեն Ա.Երիցյանը համառոտ ներկայացրեց կատարված և կատարվելիք աշխատանքները: Մասնակիցների կողմից դիտարկվող տեղամասը GIZ

կազմակերպության աջակցությամբ անտառապատված տարածքն է, որի տնկման աշխատանքները կատարվել են դեռևս 2009թ.-ին, շուրջ 44.5 հա-ի վրա՝ որպես տնկանյութ օգտագործելով սոճի ծառատեսակի 1-2 տարեկան տնկիները: Նշված տեղամասում տնկանյութի քանակը հասել է 3000-ի:

Դիտարկման արդյունքում՝ տնկիների որակը և կպչողականությունը մասնակիցների կողմից բարձր է գնահատվել, ներկայացվել են բազմաթիվ տեսակետներ և, նույնիսկ, մտավախություններ անտառապատած տարածքի վերաբերյալ, որոնցից հատկանշականը Հ. Սանասարյանի կարծիքն էր՝ մատղաշ սոճիների պահպանության վերաբերյալ: Ըստ մասնագետների՝ սոճիները մեր հանրապետությունում խոցելի ծառատեսակ են Ամանորյա տոների ընթացքում և կարող են անօրինական կերպով հայտնվել «տոնածառի» շուկայում: Դիտարկումներին ներգրավված են եղել նաև «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ում ուսումնական պրակտիկան անցկացնող ՀԱԱՀ-ի ուսանողները:

Եզրափակելով համատեղ դիտարկման արդյունքները՝ ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Գյուլխասյանը շնորհակալություն է հայտնել ներկաներին ակտիվ մասնակցության համար՝ համոզմունք հայտնելով, որ նման պարբերական բնույթ կրող այցելությունները գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի անմիջական ուշադրության կենտրոնում են:

«Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է....

Տրադեսկանցիա կամ բամբասանք

Տրադեսկանցիաներն առաջին անգամ նկարագրել և սկսել են մշակել հայր և որդի Տրադեսկանտները՝ դեռևս 17-րդ դարում: Տարածված են Արգենտինայի հյուսիսից մինչև Կանադայի հարավ, Կենտրոնական Ամերիկայում, Մեքսիկայում, ԱՄՆ հարավում, ինչպես նաև Կովկասում: Մեր հանրապետությունում հանդիպում է սենյակային բույս տեսակը:

Ուղիղ կամ գետնատարած՝ արմատացող ցողունով բազմամյա բույսեր են: Մշակովի տեսակներից առավել հայտնի են վիրգինիցա և զեբրինա տեսակները: Առաջինը լայնորեն տարածված է Ատլանտյան օվկիանոսի հյուսիսարևելյան ափերին: Z. pendula-թարգմանաբար նշանակում է՝ «զոլավոր, կախովի» բույս:

Ծաղկատերևիկները և թերթիկները երեքն են՝ վարդագույն կամ մանուշակագույն երանգներով: Տերևը կանաչ է կամ արծաթագույն՝ արտահայտված գծային զոլերով: Պտուղը փոքր տուփիկ է: Կարող է աճել նաև ջրի մեջ:

Ասում են, որ տրադեսկանցիան Արևի ծաղիկն է, որը կարող է հեռացնել մտքի, զգացմունքի կամ խոսքի միջոցով փոխանցվող անբարենպաստ էներգիան: Բույսը երբեմն անվանում են «կանացի բամբասանք», այնինչ իրականում այն պաշտպանում է բնակարանը և ընտանիքը զանազան չարամտություններից և չարակամություններից: Գիտականորեն ապացուցված է, որ բույսը մաքրում և խոնավացնում է բնակարանի օդը, պաշտպանում էլեկտրամագնիսական դաշտի ազդեցությունից: Բույսի տեսքը հանգստացնում է աչքերը, մեղմացնում լարվածությունն ու հոգնածությունը:

Բույսի հյութալի տերևները հաճախ համեմատում են կալանխոէի և հալվեի (ալոէ) հետ: Վերջին տարիներին բույսը լայնորեն ուսումնասիրվում է: Կարծիք կա, որ զեբրինայի ֆիտոնցիդներն ի զորու են ճնշել ժամանակակից արհեստական շինանյութերի արձակած վնասակար նյութերն ու վնասակար մանրէները: Իր հայրենիքում տրադեսկանցիան հնագույն ժամանակներից կիրառվել է ժողովրդական բժշկության մեջ: Գրականության մեջ նշվում է, որ զեբրինան հիբրիդ է. ացտեկները կարողացել են ստանալ խաչաձևման եղանակով, և, որ սա է իրական ոսկեբեղիկը կամ նույն «սարդ-բույսը»: Թեև նման կարծիքը չի համապատասխանում իրականությանը, այնուամենայնիվ, կարևորում է բամբասանքի բազմաթիվ բուժիչ հատկությունները՝ հակամանրէ, հակաբորբոքային, արյունարգել, վերքամոքիչ, հակաուռուցքային:

Հյութը պարունակում է ինսուլինանման նյութ: Պարզվել է, որ բույսի պատրաստուկներն օգտակար են նաև թոքախտի, շաքարային դիաբետի, անգինայի, բրոնխիտի և պարոդոնտոզի համալիր բուժման դեպքերում: Օգտագործելու ժամանակ անհրաժեշտ է մանրացնել բույսի ցողունն ու տերևները՝ 100 գ հումքին ավելացնելով 300 մլ որակյալ օդի:

Տրադեսկանցիան հեշտ է աճեցնել սենյակային պայմաններում, սիրում է վառ լուսավորություն: Ամռանը կարելի է դնել արևի ճառագայթներից և քամուց պաշտպանված պատշգամբում: Բազմանում է սերմերով, շիվերով կամ թփի բաժանման եղանակով: Սերմերի պահպանման համար հարկավոր է 20^0 C-ից ոչ ցածր ջերմաստիճան: Նոր ծլող բույսը պետք է հաճախակի ցողել ջրով և օդափոխել սենյակը: Ծաղկում է կյանքի 3-րդ տարում: Գարնանը և ամռանն անհրաժեշտ է պահպանել հողի վերին շերտի խոնավությունը: Մինչև 3 տարեկան բույսերը տեղափոխել ծաղկման՝ յուրաքանչյուր տարի, իսկ գարնանը կատարել էտի աշխատանքներ:

Երախտագիտության ծաղիկ նարգիզը

Յուրաքանչյուր ազգ ունի իր ծաղիկ-խորհրդանիշը: Ազգային ծաղիկները շատ հաճախ արտացոլում են տվյալ երկրի մշակույթն ու պատմությունը: Կան ծաղիկներ, որոնց պետություններն առավել մեծ ուշադրություն են դարձնում, քան գերբերին ու դրոշներին:

Նարգիզը հին սանսկրիտից թարգմանաբար նշանակում է կրակի ծաղիկ: Հին պարսիկներն

այս ծաղիկն անվանում էին չթառամող բերկրանք, իսկ հայերը՝ սարի ծաղիկ կամ նարգես: **Narcissus** անվանումը ծագել է հունարեն «նարկաո»՝ «թմրեցնել», «շշմեցնել» բառից, իսկ պոետական **poeticus** անվանումը ստացել է, քանի որ դարեր շարունակ ծաղկի գեղեցկությունը գովերգել են բազմաթիվ բանաստեղծներ: Նարգիզը, որը լայն տարածում ունի նաև Հայաստանում, Չինաստանի ազգային ծաղիկն է: Նարգիզը երախտագիտության խորհրդանիշն է և ընդունվում է շնորհակալության փոխարեն: Այն աճում է ճիշտ չինական Ամանորի շեմին և իր հետ յուրաքանչյուր բնակարան է բերում ուրախություն և հաջողություն: Ծաղկի գլուխը մի քիչ թեք է, կախված է ցողունի վրա և կարծես, ցանկանում է ջուր խմել սառը աղբյուրից ու հագեցնել ծարավը: Նարգիզի բացատրությունը տարբեր է հունական դիցաբանության մեջ և չինական լեգենդներում: Օրինակ՝ Անգլիայում ունի առավել մեծ արժեք, քան՝ թագուհու ծաղիկ համարվող վարդը:

Նարգիզը շքանազգիների ընտանիքի բազմամյա, սոխուկավոր խոտաբույսերի ցեղին պատկանող բույս է: Ծաղկում է հիմնականում ապրիլ-մայիս ամիսներին: Հայտնի է մոտ 60 տեսակ, մշակվում են բազմաթիվ սորտեր՝ սպիտակ, դեղին, խոշորածաղիկ և այլն, որոնք աճեցվում են պուրակներում, պարտեզներում: Հարկ է նշել, որ բացառիկ երևույթ է համարվել վարդագույն նարգիզի գոյությունը: 1921թ. Անգլիացի Բեքհաուս անունով մեկն աճեցրել է նարգիզի վարդագույն տեսակը, որը բազմիցս արժանացել է բազմաթիվ միջազգային մրցանակների:

Անհիշելի ժամանակներից նարգիզն օգտագործվել է նաև բժշկության և օծանելիքների արտադրության մեջ: Նարգիզով պատրաստված օծանելիքները, 19-րդ դարից մինչև մեր օրերը ունեն շատ բարձր արժեք:

Կարևոր է հիշել, որ նարգիզն արտադրում է լորձունք պարունակող թունավոր նյութ, որի պատճառով չի կարելի դնել ծաղկամանի մեջ այլ ծաղիկների հետ միասին, քանի որ դրանք կարող են ժամանակից շուտ թոշնել: Իսկ եթե նարգիզները մի քանի ժամ պահեք առանձին ամանի մեջ, ապա դրանք կարելի է համատեղել այլ ծաղիկների հետ (առանց ցողունը կարճացնելու): Նարգիզների մեծ տրցակի առկայությունը ննջասենյակում կարող է նյարդային մարդկանց մոտ գլխացավ (միգրեն) առաջացնել: Բուժական նպատակներով օգտագործվում են խոտաբույսի կոճղարմատները, որոնց պատրաստուկներն ունեն հակաբորբոքային, մանրէասպան, ջերմիջեցնող, ցավազրկող ազդեցություն: Նարգիզից պատրաստվող թուրմերը բուժում են նույնիսկ խոցերը: Կարող է որոշ մարդկանց մոտ ալերգիկ ռեակցիա առաջացնել՝ կարմրություն, քոր և այլն:

ԻՆՉՊԵՍ ՃԻՇՏ ԱՃԵՑՆԵԼ ՆԱՐԳԻԶԸ

Նարգիզը պարտեզում բավականին շուտ է աճում, ինչպես կակաչը: Ծաղիկն ինքնին բարդ չէ, բայց ավելի ճիշտ կլինի առանձին վայր հատկացնել աճեցման համար: Տարածքը պետք է լինի պարարտացված և լուսավոր: Եթե հողը չափազանց ալկալային է, դուք կարող եք յուրաքանչյուր քառակուսի մետրի համար 200գ ալյուր ավելացնել, ինչը կարող է նվազեցնել թթվայնությունը: Չի կարելի տնկել նարգիզներ այն վայրերում, որտեղ աճեցվել են շուշաններ, լիլիաներ, քրիզանթեմներ և այլն, սակայն այն կարող է փթթել պիոնների, վարունգների աճեցված վայրերում: Հենց օրերը սկսում են տաքանալ, արդեն կարելի է նարգիզի սոխուկները տնկել հողի մեջ: Միայն պետք է ուշադիր լինել, որպեսզի այն չլինի փափուկ, թուլացած և ունենա մեծ սոխուկ: Ինչպես բոլոր ծաղիկները, նարգիզը նույնպես ենթակա է վիրուսային հիվանդությունների: Հիվանդության ախտանիշներն են՝ սպիտակ և դեղին թերթիկների վրայի բծերը, կետերն ու տարբեր գույնի երանգները, ծաղկի վատ աճն ու անժամանակ թոռոմելը: Վարակ կարող է անցնել, հողի, սերմի, պարտեզային գործիքների, միջատների միջոցով, որոնք էլ բարդացնում են վիրուսային հիվանդությունների դեմ պայքարելը: Բուժման արդյունավետ միջոց է համարվում մինչ այդ վիրուսակիրների դեմ պայքարը, ժամանակին վարակված բույսերի ոչնչացումն ու հեռացումը, որպեսզի այն չտարածվի:

Կոկոնի ժամանակահատվածում անհրաժեշտ է նարգիզը լվանալ «ֆիտովերմ» կոչվող պատրաստուկով՝ 2 մլ՝ 1մլ ջրով: Մեկ լիտրը բավարար է 10 մ^2 տարածքը ցողելու համար:

Թարգմանությունը՝ Լիլիթ Գասպարյանի

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
2015 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱԳՐՈ Լրատու
թերթի

1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 համարինը՝ 120 դրամ

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ամսագրի

1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները,
«Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Ատպաշե» կազմակերպությունները

ԱԳՐՈ Լրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության
հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ
Գլխավոր խմբագիր և
համարի պատասխանատու՝ Լ. ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 82
ստորագրված է տպագրության 17.06.2015 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա